

Քը մարեց անոր կենաց լցուը։ Բայց
Բրիմի անունը պատմութեան մէջ իր
էջը պիտի դրաւէ, և որ պիտի դատէ
արդարութեամբ անոր գործերը։

Մ. ԱՍՏԻՂԻՈՍ ՀՈԵԳՈՒՂՈՍ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

(Տես երես 39.)

Հ Ա Ն Դ Ե Ս Պ .

ՏԵՍԻԼ Ա

ՀՈԵԳՈՒՂՈՍ ԵՒ ՊՈՊՂԻՈՍ

ՀՈ. Ա՞ստ ես դու, Պոպղիէ. գործ հասեալ փա-
ռաց Հովմայ, և իմոյ պատուոյս, և հասարա-
կաց խաղաղութեան, և դու չելանես յատեան
ծերակուտին։

ՊՈՊ. Սակայն չե են գումարեալ։

ՀՈ. Ե՛թ, մի յաղաղեր. քաջութեամբ զիսոր-
հուրդս իմ տարցիս 'ի դշուիս յատենի աւագան-
ոյն. և ցուցցես զանձն քո արժանի զարմիդ։

ՊՈՊ. Խոկ զիարդ. հրաման տաս ինձ չարիս քեզ
նիւթել։

ՀՈ. Ինչ որ միանգամ օգուտ բերէ Հովմայ՝ ինձ
անտի զեան և ոչ մի։

ՊՈՊ. Ողորմեա տէր, ինայեա յանձն քո։

ՀՈ. Համարիցին, Պոպղիէ, եթէ մոլիցիմ ինչ.
համարիցին եթէ ես միայն 'ի կենդանիս ատելի
անձին. վաշ խարեւութեանդ. նմանապէս այլոց
և ես ինքն զբարին ողջունեմ և մերժիմ 'ի չա-
րէն. այլ զաս 'ի մեզն և զնա յառաքինութեան
միայն դասնեմ։ Մեծապէս մեզ է վեասու հայ-
րենեաց՝ անձին ազատութիւն հայթայթէլ. ա-
պա չար ինձ կետնը և տղատութիւն։ Առաքի-
նութիւն՝ արեամբ չափ պաշտպանել է բաղդին
հայրենեաց. ապա բարի ինձ մահ և գերութիւն։

ՊՈՊ. Սակայն հայրենիք ոչ են...

ՀՈ. Հայրենիքն համօրէն մի մորմին է՝ որոյ և
մեք եմք մասն. յանցանք են առն քաղաքացայ
հատուածէլ զանձն մեկուսի 'ի նմանէ։ Ծնդ
օգուտ և ընդ վիաս ինքնին արժան է խսրել
նմա. և այս է որ օգաէ կամ վիասէ հայրենեացն՝
առ որ ամենայնի է պարտապան։ Եւ թէ վասն
նորս ինչ ընդ քիրան գոյ և ընդ ապաժոյժ, ոչ
ինչ ետ յանձնէ, այլ զոր 'ի նմանէն ընկալաւ՝
հատոյց։ Ինքն ծնաւ զնա, ինքն դիեցոյց և յա-
ւագոյթ աննդեան տարեալ աճեցոյց։ Օրինօքն
պարսպէ զնովաւ յանիրաւութենէ ընտանեաց,
և զնուուքն՝ յօտարաց։ Փառաց բարձի և պա-
տուոյ արժանի առնէ. պսակէ զվաստակն և
զվաստն պահանջէ զմքէֆ. և իբրու մայր ե-

զալ սիրալիր՝ տաժանի երանաւէտ խառնել
խաղաղութիւն յարեն նորա ըստ անխայել մահ-
կանացուացս նախանձոտ բազզի ։ Այսքան
պարզեք՝ ապոքէն կշիռս ունին. և որ ժխտէն
զայդ թող ամփոփեսցէ զնեան իւր, և հիւր մու-
րացիկ զանմարդի մայրիս անտառաց ամոքեսցէ
իւր ասպնջական. և անդ յախորժակն ազատու-
թեան քաղցրացին նմոն խշիք և անարդ կա-
զնիք։

ՊՈՊ. Պաշտել են ինձ բանքդ. գերես զմիտս, այլ
յորդորես ոչ զսիրտ. դիմակալէ բնութիւնն
հնազանդել քեզ։ Որդի եմ, զայն ոչ ունիմ
երբէմ մոռանալ։

ՀՈ. Զայդ Հովմայեցին զուր կցեցէ չքմեզանս։
Բրուտոս, Մանղիոս և Վիրդինիոս հարգ էին և
նոքա։

ՊՈՊ. Այս, հայր. այլ գիւցազանց այդ արու-
թիւն 'ի հարս մնաց. տակաւին ոչ պանծայ
Հովմայ յորդի մի որոյ ինքնին զայր իւր ի իսու-
տանդանս մահու մասնեալ իցէ։

ՀՈ. Ապա առաջն գու լիջիր նախանձաւոր այդմ
պարծանաց. երթ...

ՊՈՊ. Աղէ հայր...

ՀՈ. Մի ևս 'ի քէն ակն ունիմ զիմոյ բազդին
լսել զսահման։

ՊՈՊ. Իժուարինս պահանջես, տէր իմ և հայր,
և առաւել գժուարինս։

ՀՈ. Օտար ոք ճանաւես զիս, եթէ հայր։ Եթէ
օտար, մի' առ ինեւ արհամարհէր զօդուա Հովմ-
այ. խոկ եթէ հայր՝ պատկառեալ 'ի հրամանէն
և երթ։

ՊՈՊ. Ա՛հ, եթէ տեսանէիր զծուփս սրտիս՝ սա-
կաւեկ մի ինայէկիր յիս։

ՀՈ. Ես այժմ 'ի սրտէդ արութեան պահանջեմ
փորձ, ոչ սիրոյ։

ՊՈՊ. Եթէ զփորձ ինչ ինդրես զիմ, ով հայր,
ինդրեա զարիւն իմ։ և տստ յոտս քո, հայր
իմ, հեղից բովանդակ։ Այլ զի ձեռն որգւոյդ
միւսցի 'ի բեկումն քո, գիւցազուն հայր, նե-
րեա, չեմ այդմ առաքինութեան բաւական։
(Ետանէ)։

ՀՈ. Մերձենայ ժամն ահաւոր, և խիթամ ես՝
գուցէ արգեօք սասանեսցի ինչ աւագանին։ Ո՛վ
զիք հովանաւորք Հովմայ՝ գուր շնչեցէք իսոր-
հուրդս արժանաւոր 'ի սիրտս նոցա։

ՏԵՍԻԼ Բ

ՄԱՆԼԻՈՍ, ՀՈԵԳՈՒՂՈՍ

ՄԱՆ. Կացցեն այդր նուիրակք 'ի պահ դրանն, և
մի ոք իշնեցէ մտանել 'ի ներլոս։

ՀՈ. (Ճադ խնա)։ Մանղիոս. խոկ առ ինչ գոյցէ։

ՄԱՆ. Ա՛հ, թոյլ առուր ինձ գիւցազունց քաջ-
գիրկս զքէ արկանել։

ՀՈ. Զի՞ գործես. այր հիւպատոս...

ՄԱՆ. Ոչ նոյն ինքն եմ այժմ, այլ այր մի պաշ-
տօնաբեր քում առաքինութեանդ, քոյին արու-
թեանդ, այլ նախանձաւոր քո մեծ՝ որ արդ առ
քեզ գայ պարտութիւն յանձն առնուլ և մե-
զանս՝ ընդ առաջին թշնամութեան առ քեզ ու-
նելոյ. և զքոյդ աղերսէ բարեկամութեան պա-
տիւ։

ՀՌ. Դիւցազնոց վկաց ընտանի սովորոյթ : Զծառ տաղաւրեալ՝ ի փայտա անտառին՝ ոչ շարժեսցեն հողմք և ոչ խեցեն : Խմբ գերութեանս է այս մեծ յաղթանակ :

ՄԱՆ. Եւ կարի իսկ քաջ . դա ինքն ծանոյց ինձ զքեզ . և իմ երեք չեր տեսեալ զքեզ այդշափ վեհազուն , որպէս արդ ՚ի կտապան : Բազում այն է զի մաեր ՚ի Հռովմ յաղթանակաւ թշնամեաց , իսկ այժմ յաղթական անձնն և բաղդին : Քոյն սարդենիք նախանձ արկին ինձ , իսկ արդ շղթայքդ աղղեն պատկառանս : Անդ ուրեմն Հռեգուզա՝ ոչ ժխտեմ՝ դիւցազն ինձ թուէր . իսկ այժմ ասուուած գլուխին :

ՀՌ. Արդ բաւէ ք. քաջդ , արդ շատ է . գովութիւն պատուափական քոյց շրթանց՝ զհաստատուն կանդաղեալն անդամ զրդուեցուցանէ զաւաքի նութիւն : Շնորհ ունիմ սիրոյդ որով մեծացուցեր զմերջն աւուրս կենաց իմոց :

ՄԱՆ. Զմբրջն աւուրս . իմ եղեալ է ՚ի մտի անկորուսա պահել զքեզ հայրենեացս : Եւ զի պահանջան առ ՚ի մէնջ աղղեսցի փոխանակութիւն քեզ ՚ի բարի , պնդապէս զամենայն ջան ՚ի մէջ առից :

ՀՌ. (Խոռնչալ) : Այս սկիզբն է , քո , Մանլիէ , ընդ իս բարեկամութեանն . և զի՞նչ այլ էր գործել քեզ ՚եթէ ատէիրն զիս . գողանաս գովին զարդիւնս անտարգանացս : Ոչ եկի ես ՚ի Հռովմ հրապարակատես աւնել զկապանս իմ , զի վասն իմ ինչ ՚ի գումթ շարժեցից . եկեալ եմ փրկել զնա ՚ի վտանգէ անափ անարժան ինդրոյն : Եթէ ոչ ինչ այլ ունի տալ ինձ գրաւական միրոյ , գարձիր միւսանդամ ընդ իս յատելութիւն :

ՄԱՆ. Սակայն ՚ի ցրել փոխանակութեանն՝ մահ անհրաժեշտ ՚ի վերայ քո կնքեացի :

ՀՌ. Եւ միթէ այդ ձայն ահազինս ինչ բախիցէ զունին Մանլիսուի : Ես ոչ այսօր ինչ ուսանիմ զի մահկանացու եմ : Ոչ ինչ այլ կտապաեսցէ յինէն թշնամին՝ բայց զոր ինքնին բնութիւն ոչ դանդաղեսցի յափշտակել՝ ՚ի կտրոյ : Թող ապա այժմէն հարկն բոնաւոր՝ լիցի նմա յինէն նուէր կտմաւոր : Ուսցի աշխարհ՝ եթէ կեցի միայն իմոց հայրենեաց . և իբրեւ ոչ ևս կարողացայ կեալ գոնեայ զմահ իմ ետու ՚ի փրկութիւն նորա :

ՄԱՆ. Բարէ իմաստութեան շրթանցդ և հանձարոյ : Երանեմ զերկիր՝ որ զայսպիսիս պտղաբերես որդիս : Եւ արդ ո՞լ զօրեսցէ շիրել զքեզ , ո՞վ քաջ :

ՀՌ. Եթէ սիրել կամիս , զօրէն Հռովմայեցոյ սիրեա : Աւագիկ են դաշնիք մերոյ բարեկամութեան . եկ հանցուք ինչ երկաքանչեւր պատարադ Հռովմայ . ես զիկանս և դու զեարեկամդ : Ոչ ինչ է անիրաւ եթէ օգուտ հայրենեաց ցաւս ինչ ածցէ և զքէ : Երթ ապա , սակայն ուստեա ինձ զօրտվիդն լինել իսորհրդոցս յատենի ծերակուտին : Յայս պայման ուխտի ընդունելի ինձ միայն բարեկամութիւն Մանլիսուի : Զի՞նչ ունիս , քաջդ , առ այս պատասխանի :

ՄԱՆ. (Խորհի և ապա) . Այս , ուխտեմ զայդ :

ՀՌ. Արդ ինձ զբարեկամութիւն Մանլիսի ՚ի զիցն բարեկարաց համարիմ պարգև :

ՄԱՆ. Ա՛չ , ընդէր և զինս ոչ փարին կապանքդ այդպիկ :

ՀՌ. Մի ժամավառառ լիցուք . զարգիս թերես խմբեալ իցեն աւագանին : Զփառս հայրենեաց , զիսպաղութիւն իմ և զպատիւ ՚ի քում մտել . մութիւն առնեմ ապաստան :

ՄԱՆ. Ապա ողջամբ մնա , պարծանքդ Տիբերեայ : (Գիրի արիսնէ) :

ՀՌ. (Գիրի արիսնէ) : Ո՞զ երթ , բարեկամ քաջ : ՄԱՆ. Ո՛չ , որպիսի բոց փառաց և պատուոյ ճարակի յերակունս իմ ՚ի խօսելս ընդ քեզ , ո՞վ հոգի վեհազուն : Զիք ոք չփ ուրեք սիրա վեհերոտ , որ ՚ի լուր շրթանցդ՝ զբաղդ արբայական ընդ կապանացդ ոչ փոխանակիցէ : (Ելանէ) :

ՀՌ. Այժմիկ միսիթարեցաւ անձն իմ . ձեռնոտուն ինձ երկինք բարենշան՝ ՚ի լուռմն խորհրդոց կամացս :

ՏԵՍԻԼ. Դ.

ՀՐԵՎՈՒՂՋՈՍ , ԼԻԿԻՆԻՈՍ

ԼԻԿ. (Խարութեամբ) . Արդ ինդութեամբ բազմաւտեսանեմ զքեզ :

ՀՌ. Զի է քեզ այդշափ ցնծութիւնդ , Լիկինիէ : ԼԻԿ. Թաթաղուն ունիմ զիմբաս յուսով երջանկաւ . ցայդիմ ՚ի վերայ քո նահատակեի :

ՀՌ. ՚ի վերայ իմ :

ԼԻԿ. Արդարեւ . միթէ այնչափ իմն ապաշնորհ զանձն իմ կարծէկիր , որպէս զի և մոռանալ զպարտս իմ ՚ի գէպ ժամուս : Ա՛չ , ՚ի մտի ունիմ , տէր , զամենայն . գու էիր իմ հայր և առանորդ և վարդապէտ : Զառաջն քայլս ընդ քեզ շարժեցի ՚ի փառաց ասպարիզն . գու արարեր զիս ...

ՀՌ. Իսկ արդ զայն ասա , եթէ զի գործեցեր վասն իմ :

ԼԻԿ. Կնաց և ազատութեան միջնորդ քեզ եզէ :

ՀՌ. Ո՞րպէս :

ԼԻԿ. ՚ի մոռտս անդ տաճարին՝ որ արդ հանդիսարան աւագանւոյն է՝ նախարարացն սպասեալ , զմի մի իւրաքանչեւր՝ ՚ի փրկութիւն քո վառեցի :

ՀՌ. (Ընտ ինք) . Ո՞վ դիք , ո՞ լուր չարագուշակ :

Եւ գու ...

ԼԻԿ. Ոչ ես միայն էի . մի և այլում վաստակոց խորամանգեսցի գովութիւնն : Բազում ինչ գործեցի ես , այլ շատ ես քան զիս Ատափիլսու :

ՀՌ. Ո՞ :

ԼԻԿ. Ատափիլսու . ՚ի Հռովմ չիք որդի հայրակար քան զիս : Զիարդ խօսեցաւ , որպիսի բանս ՚ի մէջ առ քանիօն զիմբաս շարժեաց , որպէս զպարտասուս ցաւոցն ընդ վայելլութեանն յեւոյր . քանիպատիկ աղերս ընդ գովութիւն և ընդ յանդիմանութիւն խառնէր :

ՀՌ. Իսկ նախարարմբն :

ԼԻԿ. Եւ ո՞ բաւական է կալ առաջի յարձակման Աստիղիսյ : Ահաւասիկ հա ինքն : Տես զիարդ խայտայ ՚ի գէմս նորա յոյսն նորագիւտ :

ՏԵՍԻԼ. Դ.

ՀՐԵՎՈՒՂՋՈՍ , ԱՏՏԻՂԻՈՍ , ԼԻԿԻՆԻՈՍ

ԱՏ . Հայր իմ սիրելի , աղէ գամ մի ...

ՀՌ. Յանդղնիս դեռ ևս երեւլ տուաջի իմ: ԱՌ. ոչ գիտէի ցարդ եթէ և դու 'ի թշնամեացս իցես:

ԱՏ. Ե՞ս հայր, Բա քո թշնամի:

ՀՌ. Եւ ոչ այնպէս ինչ իցէ, որ շամբուշ մաօք տապալէ զիորհուրդս իմ:

ԱՏ. ԱՌ հայր, սէր օգտի քո' եթէ թշնամութիւն առ քեզ գրեսցի:

ՀՌ. Զի՞ բնաւ գիտես դու զօգուտ կամ զվեսա: Ո՞ զքեզ 'ի պէտո հասարակաց կոչեաց խորհրդակից իմոյ բաղդին զօրավիզն ո՞ զքեզընտրեաց զիարդ...

Լիկ. ԱՌ, արանց քաջ, տարապայման...

ՀՌ. Եւ ճիկ անգամ հանէ Լիկինիոս: Լաւ ևս էր այժմի ջատագով առնուլ ձեզ զլուութիւն, որ թերես կարծիս տայր ապաշաւանաց... Անմա՞ս աստուածք, որդի՞ մի... Հռոմայեցի՞ ոք...

ԱՏ. Այդ իսկ զի որդի եմ...

Լիկ. Եւ զի Հռովմայեցի եմ, ընդէմոդորել ան կարեկիր բաղդին կարծէի...

ՀՌ. (առ Լիկ.) Լուս լեր. վատութեանն խորհրդական ոչ է Հռովմայեցի: (առ Առ.) Կարկեաց. որոյ այլ ինչ չիք առաքինութիւն՝ իմ որդի ոչ է: Այժմիկ ահա ձերով վնասուն զծանրութիւն զգամ զկապանացս. այժմ յիշեցի ես զկորուստ ազատութեանս: (Էլանէ):

ՏԵՍԻԼ Ե

ԱՏՏԻՎԻՈՍ ԼԻԿԻԽԻՈՍ

ԱՏ. Օ՞ն, եթէ գիտիցեն արդեօք, Լիկինիէ, ծնաւ ոք երբեք ընդ արեգակամբ թշուառական քան զիս այր: Սիրել զհայր, տառապիլ 'ի վերայ նորա, և առ անձուկ գթոցն յոզի հարկանիլ այլըց պարծանք էին, իսկ առ իս յանցաւորութիւն: Լիկ. Ո՞չ, մի հարցէ զքեզ սիրա քո, և մի ձախող զակի ինչ 'ի զջումն գար ընդ հայրախնամ գըթութեանդ հանդէս: Այլ է զոր 'ի մէնչս պա-

հանջէ արժանն, և այլ զոր 'ի Հռովմուկեայ: Աթէ նմա փառք իցեն արհամարհութիւն կենաց, իսկ մեզ ամպարշառութիւն անհնարին՝ ոչ ապրեցու ցանել զնա: Յետոյ ուրեմն տեսցես դու՝ զի շնորհս խոստովանեսցի նա մեզ: Մի ցասումն նորա տագնապեսցէ ինչ զքեզ. և հիւանդ ինքնին զախտահալած ձեւնն բժշկական՝ բաղումայն է զի անկարեկիր և անողորմ բամբասէ:

ԱՏ. Այն նորա հէնք կշամբական գժնդակ սաստից խոցեն զիս կարեվէր. ոչ ևս ունիմ ժոյժ հանդարտել բարկութեան նորա:

Լիկ. Իսկ արդ ասա, միթէ հանդուրժեսցես նախ յայսպիսաւ զրկիլ 'ի հօրէ:

ԱՏ. ԱՌ, քաւ այդ. թող ընդ իս ցասմամբ լիցի, սակայն կեցցէ: (արագունէ մէջ):

Լիկ. Կեցցէ. լուսցեն ապա և այդ արտասուք: Ի թափել ազետիցդ յաշաց քոց, և զօրութիւն իմ յինէն թողանայ: (Էլանէ):

ՏԵՍԻԼ Զ

ԱՏՏԻՎԻՈՍ

ԱՌ, և կարի յոյժ նմանագոյն. կոյր է բաղդն, և չիք մէտ սրտմառութեան և սիրոյ նորա: Կամ շուայլորէն վատնէ զպարգևն, կամ 'ի մահ հարկանէ զսիրտս: Արդ յիմ վերայ տեղացին տէգք բարկութեան նորա: Բակ առին զննե ամպք մրրկածինք, և ո՞ զիտասցէ քանին զարանեսցին շանթք 'ի ծոցս նոցա: Աթէ իցեն ինչ կայծակունք՝ ահաւասիկ ձեզ, ովք զիք վրիժա գործք, ահաւասիկ զլուխ Արտիկեայ: Յիմ վերայ եղիցին հարուածքդդ. ներեմ ձեզ. զհայրն իմ միայն փրկեցէք. զձերդ 'ի նմա անփայեցէք պատկեր. և քաջաց արութեան տիպար կենդանի պահեցէք առ մեզ:

Լիլ շարունակուի:

ՎԵՆԵՑԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒԻ